ML MINING

ՄԼ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ
21/3 Ն.Ադոնց փող, Երևան, ՀՀ

ML MINING LLC
21/3 N.Adonts str, Yerevan, RA

29 հունվար 2026թ.

N 22

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգելի պարոն նախարար

«ՄԼ Մայնինգ» ՍՊ ընկերությունը 16.04.2024թ.-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացել է ՀՀ Արարատի մարզի Արտաշատի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 1-ին տեղամասի հարակից տարածքի (անվանվել է՝ Արտաշատի ԱԿԽ հանքավայրի 2-րդ տեղամաս) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման թիվ ԵՀԹ-29/397 թույլտվությունը:

Համաձայն Պ-397 պայմանագրի 4.4 կետի 4.4.11 ենթակետի և ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի թիվ 191-Ն որոշման հիման վրա՝ ընկերությունը պարտավորվել է իրականացնել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման մշտադիտարկումներ:

2025 թվականին «ՄԼ Մայնինգ» ՍՊ ընկերությունը դաշտային աշխատանքներ չի իրականացրել, կատարվել է բացառապես 2024 թվականի տվյալների կամերալ վերլուծություն, լաբորատոր փորձարկումներ, կազմվել է հետախուզական աշխատանքների արդյունքների վերաբերյալ ավարտական հաշվետվությունը: Շրջակա միջավայրի վրա ազդեցություններ և բնապահպանական կորուստներ չեն դրսևորվել, ինչի հետ կապված մշտադիտարկումներ չեն կատարվել:

«ՄԼ Մայնինգ» ՍՊԸ
գլխավոր տնօրեն՝ Է. Մարգարյան

(+374) 10 200 004 mlmining.am mlmining@mail.ru